

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել հայցվորուհի Ժ. Ասրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջները.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոնշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերող անձը գտնում է, որ վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, սխալ մեկնաբանում ու սխալ կիրառում:

Ըստ բողոք բերող անձի՝ վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 1-ին և 45-րդ հոդվածի 1-ին կետերի պահանջները, սխալ է մեկնաբանել և կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, խախտել է նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի, 114-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի, 137-րդ, 138-րդ, 139-րդ հոդվածների, ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և 4-րդ մասի պահանջները, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Բողոք բերողը նշված պնդումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանը հաշվի չի առել իր միջնորդությունը՝ նշանակել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն՝ առաջարկված տարբերակները քննարկելու, տուն և տնամերձ հողամաս մուտք գործելու համար դարպասը կիսելու մասին, քանի որ եզրակացությունում առաջարկված տարբերակներում բացակայում են տուն և տնամերձ հողամաս մուտք գործելն անմիջապես այդտեղով խոշոր չափի գազի խողովակ անցնելու պատճառով:

Իր միջնորդություններն ու բացատրությունները դատական նիստում լրիվությամբ չի արձանագրվել, որի վերաբերյալ ներկայացրել է դիտողություն: Դատական նիստի արձանագրությունն իրեն տրամադրվել է ոչ լրիվությամբ, ինչպես նաև չի արձանագրվել դատարանի՝ առանց դատական նիստերի դահլիճից հեռանալու կայացրած որոշումները, դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իր իրավունքը դատարանը չի բացատրել, դրանով իսկ խախտելով արդար դատ վարելու իր սահմանադրական իրավունքը ու ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի ու 4-րդ մասի պահանջները:

Վերաքննիչ դատարանը կանխակալ, ոչ օբյեկտիվ վերաբերմունք է դրսևորել մերժելով իր միջնորդությունները՝ դատավորների ինքնաբացարկի վերաբերյալ, չի անդրադարձել ԼՂՀ առաջին աստյանի դատարանի կողմից կողմնակալ, ոչ օբյեկտիվ մոտեցման վերաբերյալ վերոհիշյալ իր փաստարկներին, այլ փորձելով արդարացնել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի ակնհայտ դատավարական սխալը՝ գործի քննության արձանագրությունն ոչ լրիվ տրամադրելը, այն սխալ մեկնաբանությամբ, որ պատասխանողը միջնորդել է տրամադրել արձանագրության պատճենը, ոչ թե՛ պատճենները: Վերաքննիչ բողոքը մերժելու հիմքը պատճառաբանելիս վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ չի գնահատել ապացույցները, սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները, քանի որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածը վերաբերում է վճռի կատարման ապահովմանը և կետեր ու ենթակետեր չունի:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վճիռը հստակ չէ, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի վճռով հիմք ընդունված փորձագիտական եզրակացությամբ ինքը զրկվել է իր սեփականություն մուտք գործելու հնարավորությունից, որով խախտել է ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իր սահմանադրական իրավունքը, ինչպես նաև խախտել է ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին կետը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք արդար ու անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք ունի:

Բողոք բերող անձը պահանջում է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 17.09.2010թ. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 12.01.2010թ. վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան՝ նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

ԼՂՀ վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ է գնահատել ապացույցները, կայացրել հիմնավորված որոշում. Է. Լազարյանի ներկայացրած վճռաբեկ բողոքն անհիմն է, ենթակա է մերժման, անփոփոխ թողնելով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 17.09.2010թ. որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. ԼՂՀ վերաքննիչ դատարանի թիվ 02-107/08թ. քաղաքացիական գործով 12.27.2008 թվականի վճռով Մարտակերտի շրջանի Վանք գյուղում գտնվող բնակելի տան, տնամերձ հողամասի և Վանքի համայնքի երկրորդ հատվածի հողամասը յուրաքանչյուրին 1/2-րդ մասով ճանաչվել է Էդվարդ Լազարյանի և Ժասմեն Ասրյանի սեփականության իրավունքը:

2. Բնակելի տան, տնամերձ հողամասի և վարելահողի 1/2-րդ բաժնեմասն առանձնացնելու եղանակի և պայմանների վերաբերյալ բացակայում է համասեփականատերերի համաձայնությունը:

3. 06.07.2009թ. համար 4313/2008թ. դատաշինարարատեխնիկական փորձագետի եզրակացությունն ամբողջական չլինելու պատճառաբանությամբ պատասխանողի միջնորդությունը 30.12.2009թ. դատաշինարարատեխնիկական լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը չի քննարկել, իսկ միջնորդությունները՝ գործի քննությունը հետաձգելու, դատական նիստի արձանագրությանը ծանոթանալու, պատճենն ստանալու մասին, մերժել է:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված է հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության իրավունքը:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ ծագած վեճերով արդար դատաքննության իրավունքի ապահովման տեսանկյունից իր նախադեպային իրավունքում առանձնացրել և պարզաբանել է այդ իրավունքի կարևոր բաղադրիչների՝ կողմերի հավասարության և մրցակցության դատավարության պահանջների էությունը՝ դատական քննության ընթացքում կողմերի հավասարակշռությունը նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռնվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը (ներառյալ ապացույցները) այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:

Վերոնշյալ նորմերի իրացումից է բխում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով ամրագրված կողմերի մրցակցությունը և իրավահավասարության

սկզբունքը, նույն օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված գործին մասնակցող անձանց իրավունքները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին, ստանալ դրանց պատճենները, միջնորդություններ անել, առարկել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների դեմ և այլն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղում գտնվող 158,02 քառակուսի մետր մակերեսով երկհարկանի տունն ու 0,1581 հեկտար մակերեսով տնամերձ հողամասը, ջրի երկու տարողությունները և 0,28 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը պատկանում է Էդվարդ Լազարյանին և Ժասմեն Ասրյանին՝ յուրաքանչյուրին 1/2-րդ մասով: Ժ. Ասրյանն իր բաժինը բնեղենով առանձնացնելու հայց ներկայացնելով դատարան, միջնորդել է նշանակել դատահողաշինարարական փորձաքննություն:

Պատասխանող կողմը 17.03.2009թ. միջնորդել է դատական նիստը հետաձգել և նշանակել մարտի 21-ից հետո: 18.03.2009թ. դատարանը մերժել է պատասխանողի միջնորդությունը, դատական քննությունն անց է կացրել պատասխանող կողմի բացակայությամբ, և բավարարելով հայցվորուհու միջնորդությունը 18.03.2009 թվականի որոշմամբ նշանակել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, զրկելով պատասխանողին ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փորձաքննության ընթացքում պարզաբանման համար հարցեր առաջադրելու իրավունքից:

Նշված փորձաքննության եզրակացությունը գտնելով ոչ ամբողջական, պատասխանողը 30.12.2009թ. դատական նիստում միջնորդել է փորձագետի եզրակացությունը հետ ուղարկել՝ տնամերձ հողամաս և տուն դարպասով մուտք գործելու մասով իրեն ևս մուտք տրամադրելու տարբերակ մշակելու համար, որը դատարանը մերժել է:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փորձագիտական եզրակացությունը պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով մինչև նույն կամ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատական գործի քննության հետաձգման և լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հայեցողական իրավունքը կարող է իրականացվել, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Գերագույն դատարանը գտնում է, որ հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակալացության հարցն անհրաժեշտ է որոշել՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համեմատության արդյունքում Գերագույն դատարանը գտնում է, որ պատասխանող կողմի դատաշինարարատեխնիկական լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը մերժելով, դատարանը պատասխանողին զրկել է իր գործը դատարանին արդյունավետ ներկայացնելու հնարավորությունից, որով խախտվել են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին

մասի, ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության, մրցակցության և իրավահավասարության հիմնարար սկզբունքները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Մինչդեռ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է անհիմն ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով և սխալ հղում կատարելով ու մեկնաբանելով նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի գոյություն չունեցող 1-ին մասի 4-րդ կետով:

Հիմք ընդունելով սույն որոշման հիմնավորումները, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ կարող են ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն հիմք են սույն գործով դատական ակտերը բեկանելու համար: Գերագույն դատարանը գտնում է նաև, որ սույն գործով արձանագրված դատական սխալն ուղղելու համար անհրաժեշտ է գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Սույն վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով, Գերագույն դատարանը դիտում է բավարար վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, ուստի բողոքի մյուս հիմքերին չի անդրադառնում:

Բացի դրանից, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով դատարանը վճռի եզրափակիչ մասում հղում է կատարել փորձաքննության եզրակացությանը կից հավելվածներին, խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի պահանջը, հստակ և ուղղակի չի նշել իր եզրահանգումը բավարարած հայցապահանջի մասին:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 251-256-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Էդվարդ Լազարյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. սեպտեմբերի 17-ի՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունվարի 12-ի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Շ. ՕՅԱՆՅԱՆ

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ